ԸՆՏԱՆԻՔԻ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԲԱԲԱՅԱՆ Ի. Գ.

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ

Ընտանիքը բոլոր ժամանակներում եղել է հասարակության արժեքային համակարգի կրողը, չնայած նրան, որ պատմամշակութային յուրաքանչյուր ժամանակաշրջան իր կնիքն է դրել ընտանեկան արժեքների, սովորույթների և ավանդույթների ձևավորման և հասարակության կողմից դրանց ընկալման վրա:

Ընտանիքը հանդիսանում է սոցիալ մշակութային այն միջավայրը, որտեղ երեխան ստանում է առաջին պատկերացումները ընտանեկան արժեքների, սովորույթների և ավանդույթների մասին:

Ժամանակակից հասարակության պայմաններում ընտանեկան արժեքները կորցրել են իրենց իմաստը, ավանդույթները և սովորույթները վերափոխվել են՝ կարևորություն տալով օտարամուծություններին, ուստի անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ այս հիմնախնդրին:

Յուրաքանչյուր ընտանիք ինքն է ստեղծում իր ընտանեկան սովորույթներն ու ավանդույթները, հաշվի առնելով իր ընտանեկան մթնոլորտը, ընտանիքի անդամների բնավորություններն ու նախասիրությունները:

Արժեքային համակարգի, սովորույթների, ավանդույթների և դաստիարակության առանձնահատկությունների ուսումնասրիությամբ զբաղվել են դեռևս հնագույն ժամանակներից, սակայն, այս խնդրի ուսումնասիրությունը չի կորցրել իր կարևորությունն ու արդիականությունը, քանի որ ժամանակակից հասարակության մեջ ընտանիքի արժեքային կողմնորոշումները, սովորույթները և ավանդույթները նկատելի փոփոխությունների են ենթարկվել , ինչն էլ իր հերթին հսկայական ազդեցություն է ունենում երեխաների դաստիարակության գործընթացի վրա [3, 215]:

Ընտանեկան դաստիարակության մշակույթն ունի ոչ միայն պահպանող, այլև զարգացնող բնույթ: Եթե նախնադարում աճող սերնդին դաստիարակում էին զուտ ցեղային ծեսերի նկատմամբ հավատարմություն պահպանելու տաբուներով, ապա այսօր անհրաժեշտություն է դարձել, օրինակ երեխաների մեջ դաստիարակել թվայնացված իրականությունից օգտվելու առողջ վարքագիծ /2, 32/:

Ուստի անհրաժեշտ է վեր հանել այն ընտանեկան արժեքների, սովորույթների ու

ավանդույթների բնորոշ գծերը, որոնք դրականորեն ազդում են երեխաների դաստիարակության գործընթացի վրա:

Ընտանեկան արժեքները և ավանդույթները , դրանք ապագա ունեցող ամուր և մտերմիկ ընտանիքի հիմքն են: Դրանք կարգավորում են ընտանիքի անդամների կենսագործունեությունը, նպաստում են ընտանիքում մտերմությանը, փոխադարձ հարգանքի և փոխըմբռնման ամրապնդմանը, այսինքն հանդիսանում են նպաստավոր սոցիալ-մշակութային միջավայր, որտեղ ձևավորվում, զարգանում և դաստիարակություն է ստանում երեխան:

Երեխայի անձի ձևավորման գործում մեծ դեր ունեն ընտանիքի հոգևոր արժեքներն ու դրանց փոխանցումը երեխաներին: Մասնավորապես ՝ բարոյականության պարզ նորմերի փոխանցումը՝ բարյացկամություն, ազնվություն, հոգատարություն և այլն: Ընտանեկան արժեքների վրա է ձևավորվում երեխայի առաջին պատկերացումները ՝լավի՝ և ՝վատի՝, ՝բարու՝ և ՝չարի՝, ՝գեղեցիկի՝ և ՝տգեղի՝ մասին, երեխան սովորում է սիրել, հասկանալ, վստահել, հոգ տանել:

Ժամանակակից ընտանիքներում այսօր շատ հաճախ ենք հանդիպում այն երևույթին, երբ մայրը կամ հայրը , գրեթե չեն մասնակցում երեխայի առօրյային: Իհարկե, նման դեպքերում օգնության են գալիս դայակը, տատիկները կամ որևէ կրթական համալիր, բայց արդյունքում երեխան մնում է անտեսված, ունենում է ինքնավստահության պակաս, իսկ երբեմն էլ ցուցաբերում է հակասոցիալական վարքագիծ[4, 89]:

Եթե ծնողը իր վարքով ու արարքներով դրական օրինակ չի հանդիսանում իր երեխաների համար, եթե նա անկեղծ սեր ու հեղինակություն չի վայելում իր երեխաների կողմից և չի հանդիսանում ընտանեկան արժեքների կրող, ապա նրա դատիարակչական բոլոր միջոցառումները նման կլինեն դատարկ կրակոցի[5, 66-67]:

Երեխայի լիարժեք զարգացման համար կարևոր է հետևյալ հարցերի պարզաբանումը. որքանով է ընտանիքը լիարժեք կատարում իր գործառույթները, որքանով են դրանք դաստիարակչական ազդեցություն թողնում երեխայի վրա :Այն գործոնները, որոնք ձևավորում են անձը ընտանիքում /ընտանիքի կազմը, ընտանիքի անդամների արյունակցական-հարազատական կապերը, ընտանիքի նյութական պայմանները, բարոյահոգեբանական մթնոլորտը/, որքանով են ծնողները պատրաստ երեխաներին սիրել, դաստիարակել, որքանով է բարձր նրանց հեղինակությունը երեխաների աչքում [1, 39]:

Այս հարցերի և մեր կողմից ուսումնասիրվող հիմնախնդրի շրջանակներում իրականացրել ենք փոքրիկ հետազոտություն, անցկացրել ենք զրույց երեխաների և նրանց ծնողների հետ՝ բացահայտելու ծնող-երեխա փոխհարաբերությունները, ընտանեկան

արժեքների, սովորույթների և ավանդույթների փոխակերպումները ժամանակակից հասարակության պայմաններում:

Աղյուսակ 1

Դիտարկված արժեքներ	Դիտարկման արդյուքներ
Սեր	Գրեթե բոլոր երեխաները սիրում էին իրենց ընտանիքները և վստահորեն նշում, որ սիրված են իրենց ընտանիքի կողմից:
Հանդուրժողականություն	Երեխաների մեծ մասը չէին կարողանում հանդուրժել միմյանց, նրանցից շատերը եսասեր էին, չէին կարողանում ընկերների հետ կիսվել իրենց ունեցածով:
Ազնվություն	Երեխաներից շատերը միմյանց հանդեպ ազնիվ չէին: Երբեմն ստում էին, նույնիսկ ամենաչնչին հարցերում:
Ներողամտություն	Միմյանց հետ խնդիրներ ունենալիս չէին դրսևորում հիշաչարություն և միմյանց հանդեպ բավականին ներողամիտ էին:
Հարգանք մեծերի հանդեպ	Մեծերի հանդեպ հիմնականում հարգանք էին դրսևորում:
Փոխօգնություն	Անհրաժեշտության դեպքում հիմնականում կարողանում էին միմյանց օգնել և լրացնել իրար:
Վստահություն	Շատերը չէին վստահում և հավատում միմյանց:
Նվիրվածություն	Հիմնականում դրական պատկեր էր:
Պատասխանության զգացում	Կային երեխաներ, ովքեր պատասխանատվություն չէին կրում իրենց արածների և ասածների համար: Սակայն մեծ մասը բարձր պատասխանատվության զգացում ուներ:
Հետաքրքրությունների շրջանակը	Հետաքրքրությունների շրջանակում մեծ տեղ էր զբաղեցնում համակարգիչը , ֆուտբոլը, պարը, նկարչությունը և այլն:
Հայրենասիրություն	Երեխաների մեծ մասը սիրում էին իրենց հայրենիքը և ցանկանում էին ապրել իրենց երկրում:
Ազգային արժեքների պահպանում	Յուրաքանչյուրն էլ ցանկանում էր կրել այնպիսի ազգային արժեքներ, որոնցով կպահպանեին իրենց հայ լինելը:

Վարդավառը	Երեխաների ամենասիրած տոնն է, քանի որ դա զվարճալի է նրանց համար:

Ծննդյան տոները	Հատկապես սիրում են իրենց ծննդյան տոները, քանի որ սիրում էին լինել ուշադրության կենտրոնում(հատկապես նվեր ստանալը)։
Սուրբ Զատիկ	Սիրում են այդ ավանդույթը, քանի որ տոնը վերածվում է խաղի։

Վերը նշված առավել պատկերավոր ցուցադրելու համար ներկայացնենք դիագրամի տեսքով. /տես դիագրամ 1/

Դիագրամ 1



Ծնողների հետ ևս ունեցանք զրույց ընտանեկան արժեքների, այն սովորույթների ու ավանդույթների մասին , որոնք գործում են ընտանիքում, ուշադրության կենտրոնում պահելով վերը նշված արժեքները, սովորույթներն ու ավանդույթները։

Արդյունքում բացահայտեցինք հետևյալը.

Աղյուսակ 2

Դիտարկված արժեքներ	Դիտարկման արդյունքներ
Սեր	Ծնողների գերակշիռ մասը կարևորում են ընտանիքի անդամների փոխադարձ սերը։
Հանդուրժողականություն	Ծնողները հիմնականում հանդուրժող էին երեխաների հանդեպ, սակայն սովորեցնում էին միայն ընտանիքում լինել այդպիսին։

Ազնվություն	Ծնողներից շատերը տարբեր հարցերում ազնիվ չէին իրենց երեխաների հետ: Հաճախ պատեհ կամ անպատեհ առիթներով ստում էին նրանց:
Ներողամտություն	Ծնողները գրեթե միշտ էին ներողամիտ երեխաների հանդեպ, սակայն չէին սովորեցնում ընտանիքից դուրս այդպիսին լինել:
Հարգանք մեծերի հանդեպ	Մեծերի հանդեպ հիմնականում հարգանք էին դրսևորում:
Փոխօգնություն	Ընտանիքներում մեծամասամբ կարողանում էին օգնել և լրացնել իրար:
Վստահություն	Ծնողներից հիմնական մասը վստահում և հավատում էին իրենց ընտանիքի անդամներին:

Նվիրվածություն	Հիմնականում նվիրված էին իրենց ընտանիքի անդամներին:
Հետաքրքրությունների շրջանակը	Ծնողների հետաքրքրության շրջանակը նեղ էր, հիմնականում՝ առօրյա-կենցաղային:

Վերը նշվածը ներկայացնենք դիագրամի տեսքով. /տես դիագրամ 2/

Դիագրամ 2



Ամփոփելով մեր իրականացրած հետազոտության արդյունքները, պետք է նշենք, որ

ժամանակակից ընտանիքները, որպես սոցիալ-մշակութային միջավայր երեխաների դաստիարակության համար այնքան էլ “ առողջ “ չեն, ուստի մանկավարժները և հոգեբանները դեռ շատ անելիքներ ունեն այս հիմնախնդրի շրջանակներում, քանի որ ընտանեկան արժեքներով, սովորույթներով և ավանդույթներով է պայմանավորված, թե ինչպիսի քաղաքացի և ապագա ծնող կձևավորվի վաղը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թոփուզյան Ա.Օ., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ, Երևան, 2009թ., 297էջ:
2. Մանուկյան Ա.Լ., Ընտանեկան դաստիարակությունը հայ էթնոմանկավարժական մշակույթում, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2021թ., 222 էջ:
3. Մելիքյան Ս., Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները, Նախաշավիղ , 2013, N1, էջ 26-27:
4. Дивисенко К., С., Динамика ценнстей школников (По материалам автобиографий исочинений) //Социологические исследования.-2008.-N8-122.:
5. Ермолич С., Я., Методологические предпосылки формирования ценностых ориентаций у подростков, Пазашкольнае выханне.-2007. N 9.-С. 23-27:

THE IMPACT OF THE FAMILY AS A SOCIO-CULTURAL ENVIRONMENT ON THE CHILD'S EDUCATION

In this article, we present the modern family as a socio-cultural environment for the upbringing of a child, emphasizing the role of family traditions, rituals, and the relationship between family members in the upbringing of a child. We have analyzed our research on this issue and presented the results.

Keywords: *family, socio-cultural environment, child, education, tradition, values*